

ԱՇԽԵՆ ՌՈՒԲԵՆԻ ՂԱՐՍԼՅԱՆ

Ծնվել է 1986 թվականին, Շիրակի մարզի Ամասիա գյուղում:

2007թ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2009թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2015 թվկանին ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2017 թվականին ավարտել է ՀՀ արդարադատության ակադեմիան:

2021 թվականին ավարտել է ԱՄՆ-ի Թավթսի համալսարանի Ֆլեթչերի անվան իրավունքի և դիվանագիտության դպրոցի կողմից կազմակերպված «Հանրային քաղաքականություն և հանրային կառավարում» մասնագիտությամբ դասընթացը:

12.01.2008-10.09.2009թթ. աշխատել է Ագրոհոլդինգ» ՍՊԸ-ում՝ որպես «իրավախորհրդատու:

22.09.2009-02.02.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

01.04.2011-15.07.2013թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական ներկայացուցչության ապահովման բաժնում՝ նախ որպես առաջին կարգի մասնագետ, ապա գլխավոր մասնագետ:

22.07.2013-26.03.2014թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես ավագ մասնագետ:

26.03.2014-11.11.2014թթ.աշխատել է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես ավագ մասնագետ:

11.11.2014-01.02.2019թթ. աշխատել ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես նախագահի խորհրդական:

31.07.2020 թվականին Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է որպես Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի ոչ դատավոր անդամ:

01.02.2019 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար:

2018-2019թթ. հանդիսացել է ՀՀ արդարադատության ակադեմիայի դասախոս:

2015 թվականից առ այսօր աշխատում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում որպես նույն

ամբիոնի ասիստենտ (կարդացվող դասընթացները՝ քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն):

2010 թվականից զբաղվում է գիտամանկավարժական գործունեությամբ, հեղինակ է մեկ մենագրության և մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների, համահեղինակ է երկու դասագրքի:

Տիրապետում է հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներին:

Ամուսնացած չի:



Նարինե Աշոտի Ավագյան

Ծնվել է 1989 թվականի փետրվարի 9-ին, Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքում:

1995-1996թթ. սովորել է Չարենցավանի թիվ 2-րդ դպրոցում, այնուհետև տեղափոխվել է Երևան և 1996-2005թթ կրթությունը շարունակել է Երևանի թիվ 139 միջնակարգ դպրոցում:

2009 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2012 թվականին ավարտել է ց իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2013-2017թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրայում (քաղաքացիական իրավունքի ամբիոն):

2011թվականին ավարտել է Ստոկհոլմի համալսարանը՝ ստանալով մագիստրոսի կոչում Եվրոպական մտավոր սեփականության իրավունք մասնագիտացմամբ:

2016 թվականին մասնակցել է ԱՄՆ պետական դեպարտամենտի կողմից ֆինանսավորվող PFP ծրագրին ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոն քաղաքում:

2018 թվականին մասնակցել է Քաղաքականություն մշակողների դասընթացին Արևելյան գործընկերների համար Շվեդիայում (Սանդո):

01.09.2009-10.01.2011թթ. աշխատել է «Կարախանյան և ընկերներ» իրավաբանական գրասենյակում՝ որպես իրավաբան:

14.09.2011-31.10.2011թթ. աշխատել է «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ում որպես իրավատնտեսագիտական բաժնի իրավաբան:

01.11.2011-01.06.2012թթ. աշխատել է «Սիրունյան ընդ կո» իրավաբանական գրասենյակում՝ որպես իրավաբան:

2011-2016թթ. զբաղեցրել է Երևանի պետական համալասարանի իրավաբանական կլինիկայի տնօրենի պաշտոնը:

14.06.2012-01.06.2015թթ. աշխատել է «ԱրմենՏել» ՓԲԸ իրավաբանական տնօրինության բիզնեսի իրավական ապահովման բաժնում՝ որպես իրավաբան:

2017թ.-ից առ այսօր հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս:

09.2015-10.2015թթ. աշխատել է «Կնյազյան ընդ փարթնրս» իրավաբանական գրասենյակում՝ որպես իրավաբան:

02.10.2015-08.11.2016թթ. աշխատել է Արդարադատության նախարարության Օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչությունում՝ որպես վարչության պետի տեղակալ:

24.03.2016 թվականին շնորհվել է քաղաքացիական ծառայության 2-րդ դասի դասային աստիճան:

08.11.2016-25.05.2017թթ. աշխատել է Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչությունում՝ որպես վարչության պետի տեղակալ:

Ներգրավված է եղել մի շարք փորձագիտական աշխատանքներում: Մասնավորապես՝ 2016թ. ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Ժողովրդավարության բաժին, տեղեկատվության ազատության գծով փորձագետ, 2018-2019թթ.՝ «Դրական մարդկանց հայկական ցանց» հասարակական կազմակերպության դեղերի արտոնագրման գծով փորձագետ:

25.05.2017-27.09.2018թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովում՝ որպես Ազգային ժողովի նախագահի տեղակալի խորհրդական:

01.10.2018-20.12.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

20.12.2018-22.07.2020թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես ծառայության պետ:

22.07.2020 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ Կադաստրի կոմիտեում՝ որպես Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ:

Տիրապետում եմ հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուների:

09.09.2021 թվականից հանդիսանում է իրավաբանական գիտությունների թեկնածու է:

Հանդիսանում է 8 գիտական աշխատությունների հեղինակ:

Ամուսնացած չի:



Սյուզննա Արմենի Վարդանյան

Ծնվել է 1996թ. հունիսի 6-ին, ք. Երևանում:

2013 թվականին ավարտել է Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 դպրոցը:

2017 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2019 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

28.12.2017-20.09.2018թթ. աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության օրենսդրության բաժնում՝ որպես փորձագետ:

03.12.2018-04.03.2021թթ. աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործ և մտավոր սեփականության պաշտպանության ընթացակարգի բաժնում՝ որպես մաքսային տեսուչ-իրավաբան:

14.10.2020 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրա՝ որպես հայցորդ:

04.03.2021 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության մաքսային կանոնների խախտումների վերաբերյալ վարույթների իրականացման բաժնում՝ որպես ավագ մաքսային տեսուչ-իրավաբան:



Սուսաննա Դավթի Նալբանդյան

Ծնվել է 1969 թվականի ապրիլի 9-ին, ք. Երևանում:

1986 թվականին ավարտել է Ձեռժինսկու անվան միջնակարգ դպրոցը:

14.10.1986-14.01.1988թթ.աշխատել է Գերագույն դատարանում՝ որպես մեքենագրուհի:

14.01.1988-12.01.1999թթ. աշխատել է Գերագույն դատարանում՝ որպես քրեական գործերով նիստերի քարտուղար:

2006 թվականին ավարտել է Հայաստանի Հանրապետության տնտեսահրավագիտական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

12.01.1999-01.01.2008թթ աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական գործերով պալատի դատավորի օգնական:

26.12.2006 թվականին շնորվել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան:

01.01.2008-12.02.2009թթ. աշխատել է Երևանի քաղաքացիական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

13.05.2009-07.12.2011թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

13.01.2012-12.10.2021թթ աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2012թվականին ստացել է փաստաբանական գործունեության թիվ 1623 արտոնագիր:

Գերազանց տիրապետում է ռուսերեն լեզվին:



Սուրեն Ամրահու Պետրոսյան

Ծնվել է 1986 թվականի հոկտեմբերի 16-ին, Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաքում:

2008 թվականին ավարտել է «Հայաստանում Ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը:

2010 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան:

2010-2012 պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքերում:

2014 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի «Գալիք» համալսարանի կառավարման ֆակուլտետի բակալավրիատը:

02.02.2009-27.05.2009թթ. աշխատել է «Միքս Փեյնթս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան համատեղության կարգով:

02.05.2009-31.05.2010թթ. աշխատել է «Գինափ» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

15.03.2013-18.11.2013թթ. աշխատել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետաքննության վարչությունում՝ որպես հետաքննիչ:

24.03.2014-02.03.2015թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

02.03.2015-23.11.2021 թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

23.11.2021 թվականից առ այսօր աշխատում է Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունումէ՝ որպես ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա: